1000 խոշոր հարկատուների կողմից 2024թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2024թ. հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 387 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է ընդամենը 6 մլրդ դրամով կամ շուրջ 2 տոկոսով (գծապատկեր 1): Դիտարկվող եռամսյակում խոշորագույն հարկատուների կողմից վճարված հարկերի ընդհանուր մեծության աճի տեմպը 2017-2020թթ. համեմատությամբ էականորեն ավելացել է:



Գծապատկեր 1. Հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2024թ. հունվար-մարտ ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, որոշակի փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2024թ.նշված ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 98 մլրդ դրամ հարկ, նախորդ տարվա համեմատ մոտ 10 տոկոսով ավելի: 100 խոշորագույնների վճարած հարկերի մեծությունը կազմել է 225 մլրդ դրամ, որը 13 մլրդ դրամով ավելի է 2023-ի առաջին եռամսյակի արդյունքից (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-մարտ ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Ի տարբերություն առավել խոշոր հարկատուների, 1000-յակի ցանկում ներառված վերջին 100 հարկատուների վճարած հարկերը դիտարկվող ժամանակահատվածում որոշակի նվազում են արձանագրել (նախորդ տարվա համեմատ՝ շուրջ 8,5 տոկոսի չափով): Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2024թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 7,4 մլրդ դրամ՝ 2023-ի 8,0 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. առաջին եռամսյակի համար կազմել է 30 անգամ, ինչը բարձր է նախորդ տարվա մակարդակից, բայց շարունակում է ցածր մնալ 2017-2022թթ. արդյունքից:

Առաջին և վերջին տասնյակների վճարած հարկերի հարաբերակցությունը ևս աճել է՝ հասնելով 141 անգամի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հարաբերակցությունը 118 անգամ էր (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2024թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 64 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2023-ի առաջին եռամսյակում կար այդպիսի 65 հարկատու, 22-ին՝ 49, 2020-ին՝ 47, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2024-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, 137 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը, ինչը պակաս է նախորդ տարվա մակարդակից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 144 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2024թ. առաջին եռամսյակի արդյունքներով, խոշոր հարկատուների ցանկում ներառված տնտեսվարող սուբյեկտներից 267-ի պարագայում վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվն ավելի քիչ էր (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2023թ. հունվար-մարտ ամիսներին պետք էր վճարել ավելի քան 75 մլն դրամի հարկ, մինչդեռ այս տարի դրա համար բավարար է արդեն 70 մլն դրամը: Համեմատելու համար արձանագրենք, որ 2022-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 50 մլն դրամը, իսկ 2020-ին՝ 37 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2024-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 63 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարիների համեմատությամբ այս ցուցանիշի մակարդակը որոշակի փոփոխություն է արձանագրել և գտնվում է վերջին տարիների համեմատաբար ամենաբարձր մակարդակի վրա: Ավելացել է նաև եկամտային հարկի վճարման ծավալով աչքի ընկած սուբյեկտների թիվը: Այսպես, հաշվետու եռամսյակում ՀՀ 183 հարկատու վճարել է 100 մլն դրամը գերազանցող եկամտային հարկ: Նախորդ տարի այդպիսիք 160-ն էին, 2022-ին՝ միայն 126-ը: (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը, ինչը 2019-ից ի վեր համեմատաբար կայուն նվազման վարքագիծ էր դրսևորում՝ ընդհուպ մինչև 2023թ-ը: 2024թ. հունվար-մարտին ցուցանիշը աճել է՝ 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 31,5%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 26,2% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 28,7%-ն ուղղակի հարկեր են, ինչը մոտ 9 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա մակարդակից:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2024թ. առաջին 3 ամիսների արդյունքներով, 51 հակատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 43 էր, իսկ 2022-ին՝ 30:

2024թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 243 ընկերություններ, 2023-ին հանրապետությունում գործել է 209 այդպիսի կազմակերպություն: Ուշագրավ է, որ 2020-ից հետո ցուցանիշի աճի տեմպի նշանակալի արագացում է նկատվում (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2024թ. հունվար-մարտ ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2022	2023	2024
Ընդամենը, մլրդ դրամ	1.1	1.4	1.5	1.5	1.9	2.1
Շահութահարկ, մլն դրամ	155	171	249	227	197	249
Եկամտային հարկ, մլն դրամ	182	251	280	279	325	396
ԱԱՀ, մլն դրամ	516	625	700	783	980	999
Ակցիզային հարկ, մլն դրամ	320	167	214	165	260	229

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 2,1 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 1,9 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ մոտ 250 մլն դրամ (2023-ին՝ 200 մլն դրամ), եկամտային հարկը՝ 400 մլն դրամ (2023-ին՝ մոտ 325 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1 մլրդ դրամ (2023-ին՝ 980 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 230 մլն դրամ (2023-ին՝ 260 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2022	2023	2024
Ընդամենը	27.0	35.6	39.0	53.0	80.0	74.0
Շահութահարկ	2.7	3.5	4.3	3.5	3	6.4
Եկամտային հարկ	8	11.6	11	12	15	17
ԱԱՀ	14	16	20	28	43	38
Ակցիզային հհարկ	7	1.8	1	1.5	0.8	0.8

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. առաջին եռամսյակի արդյունքներով վճարել է 74 մլն դրամի հարկ (2023-ին՝ 80 մլն դրամ), շահութահարկը՝ 6,4 մլն դրամ (2023-ին՝ 3 մլն դրամ), եկամտային հարկը՝ 17 մլն դրամ (2023-ին՝ 15 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 38 մլն դրամ (2023-ին՝ 43 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 81%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին կազմել է 83%, ինչը նկատելիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից (գծապատկեր 9):



Գծապատկեր 9.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի առաջին հիսունյակում ներառված հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2023-2024թթ. առաջին եռամսյակի ընթացքում: Դիտարկված հարկատուների շուրջ 1/3-ի դեպքում

նախորդ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ առկա է վճարած հարկերի ծավալի նվազում: Այս ցուցանիշով զգալի է ԱԿԲԱ բանկի վճարած հարկերի կրճատումը՝ շուրջ 3,9 մլրդ դրամով, «Գազպրոմ Արմենիա»-ն՝ -2,7 մլրդ դրամ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ»-ը՝ -2,6 մլրդ դրամ, «Ֆիլիպ Մորրիս Արմենիա»ն՝ -1,8 մլրդ դրամ, «Յուքոմ»-ը՝ -1,5 մլրդ դրամ:

Հիսունյակի մեջ ներառված հարկատուների 2/3-ը նախորդ տարվա համեմատ ավելացրել է վճարած հարկերի մեծությունը, ընդ որում՝ դրանց կեսի դեպքում աճը գերազանցում է 1 մլրդ դրամը: Նախորդ տարվա համեմատությամբ ամենամեծ ավելացում արձանագրած հարկատուների շարքում են՝ ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ՝ +14,6 մլրդ դրամ, ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ՝ +2,1 մլրդ դրամ, ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ՝ +1,5 մլրդ դրամ, ՅՈՒՆԻԲԱՆԿ՝ +1,5 մլրդ դրամ:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2023	2024	Տարբերությունը
1	ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ	5.3	19.9	14.6
2	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ	20.9	18.2	-2.7
3	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	15.5	15.6	0.1
4	ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ	11.7	13.2	1.5
5	ՓՐԻԹԻ ՈՒԵՅ	8.7	8.8	0.1
6	ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ	5.1	4.8	-0.3
7	ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	7.3	4.7	-2.6
8	ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ		4.6	4.6
9	ՍԻԹԻ	3.6	4.3	0.7
10	ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ	2.1	4.2	2.1
11	ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ	2.3	3.6	1.3
12	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	2.8	3.4	0.6
13	ԱԿԲԱ ԲԱՆԿ	7.1	3.2	-3.9
14	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	2	3.2	1.2
15	ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	3.1	2.8	-0.3
16	ՖԼԵՇ	3.9	2.7	-1.2
17	ԴԻՋԻԹԵՅՆ	1.3	2.7	1.4
18	ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ	4.5	2.7	-1.8
19	ՄԱՔՍ ՕԻԼ	2.7	2.7	0.0
20	ԿԱԲԱՐԿՈ	1.3	2.4	1.1
21	ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	2.1	2.4	0.3
22	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	1.5	2.4	0.9
23	ՅՈՒՆԻԲԱՆԿ	0.8	2.3	1.5
24	ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ	1	2.2	1.2
25	ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ	3	2.2	-0.8
26	ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ	2.5	2.1	-0.4
27	ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ	1.5	1.9	0.4
28	ՅՈՒՔՈՄ	3.4	1.9	-1.5
29	ԱԹԵՆՔ	0.9	1.9	1.0
30	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ՏՐԱՆՍԳԱԶ	1.9	1.8	-0.1
31	ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ	1.6	1.8	0.2
32	ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ	1.7	1.7	0.0
33	ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓԻ ԱՐՄԵՆԻԱ	1.5	1.7	0.2
34	ՌԳ ԳՐՈՒՊ		1.7	1.7
35	ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ	1.55	1.6	0.1
36	ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	1	1.5	0.5
37	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ	1.7	1.5	-0.2
38	ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ	1.2	1.5	0.3
39	ՊՈՌՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	0.5	1.5	1.0
40	ԻՆԵԿՈԲԱՆԿ	1.2	1.5	0.3
41	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ	1.8	1.5	-0.3
42	ԹԻԲԻ ԱՐՄ		1.4	1.4
43	ՍԱՍ-ԳՐՈՒՊ	1.5	1.4	-0.1

44	ԷՎՈԿԱԲԱՆԿ	1	1.4	0.4
45	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ	1.3	1.4	0.1
46	ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ	1.5	1.4	-0.1
47	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ		1.3	1.3
48	ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ	1.5	1.3	-0.2
49	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	1.4	1.3	-0.1
50	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	1	1.3	0.3

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2024թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 387 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է ընդամենը 6 մլրդ դրամով կամ շուրջ 2 տոկոսով,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 98 մլրդ դրամ հարկ՝ նախորդ տարվա համեմատությամբ մոտ 10 տոկոսով ավելի,
- ✓ 100 խոշորագույնների վճարած հարկերի մեծությունը գերազանցել է 225 մլրդ դրամը, ինչը 13 մլրդ դրամով ավելի է 2023-ի առաջին եռամսյակի արդյունքից,
- ✓ ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2024թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 7,4 մլրդ դրամ՝ 2023-ի 8,0 մլրդ դրամի փոխարեն,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. առաջին եռամսյակի համար կազմել է 30 անգամ, ինչը բարձր է նախորդ տարվա մակարդակից, բայց շարունակում է ցածր մնալ 2017-2022թթ. արդյունքից:
- ✓ Առաջին և վերջին տասնյակների վճարած հարկերի հարաբերակցությունը ևս աճել է՝ հասնելով 141 անգամի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հարաբերակցությունը 118 անգամ էր;
- ✓ 2024թ. հունվար-մարտի արդյունքներով՝

- ՀՀ-ում գործող 64 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2023-ի առաջին եռամսյակում այդպիսի հարկատուների թիվը 65 էր,
- 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 137 է (2023-ին՝ 144),
- խոշոր հարկատուների ցանկում ներառված տնտեսվարող սուբյեկտներից 267-ի պարագայում վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվն ավելի քիչ էր,
- 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2024թ. հունվար-մարտ ամիսներին պետք էր վճարել շուրջ 70 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2023-ին ցանկում ներառվելու համար անհրաժեշտ կլիներ 75 մլն դրամ, 22-ին՝ բավարար կլիներ 50 մլն դրամը,
- 63 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարիների համեմատությամբ այս ցուցանիշի մակարդակը որոշակիորեն ավելացել է. նախորդ տարի կար 50 այդպիսի ընկերություն,
- եկամտային հարկի վճարման ծավալով աչքի ընկած սուբյեկտների թիվը ընթացիկ տարում զգալիորեն ավելացել է: Հաշվետու եռամսյակում ՀՀ 183 հարկատու վճարել է 100 մլն դրամը գերազանցող եկամտային հարկ: Նախորդ տարի այդպիսիք 160-ն էին, 2022-ին՝ միայն 126-ը,
- 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացում է գրանցվել, ինչը փոխում է 2019-ից ի վեր համեմատաբար կայունացած միտումը: 2024թ. հունվար-մարտին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 31,5%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 26,2% էր,
- 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության միայն 28,7%-ն են ուղղակի հարկերը, ինչը 6 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա մակարդակից,
- 51 հակատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 43 էր, իսկ 2022-ին՝ 30,

- 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 243 ընկերություններ, 2023-ին հանրապետությունում գործել է 209 այդպիսի կազմակերպություն. 2020-ից հետո ցուցանիշի աճի տեմպի նշանակալի արագացում է նկատվում:

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 2,1 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 1,9 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ մոտ 250 մլն դրամ (2023-ին՝ 200 մլն դրամ), եկամտային հարկը՝ 400 մլն դրամ (2023-ին՝ մոտ 325 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1 մլրդ դրամ (2023-ին՝ 980 մլն դրամ), ակցիզային հարկը՝ 230 մլն դրամ (2023-ին՝ 260 մլն դրամ):

✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. առաջին եռամսյակի արդյունքներով վճարել է 74 մլն դրամի հարկ (2023-ին՝ 80 մլն դրամ), շահութահարկը՝ 6,4 մլն դրամ (2023-ին՝ 3 մլն դրամ), եկամտային հարկը՝ 17 մլն դրամ (2023-ին՝ 15 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 38 մլն դրամ (2023-ին՝ 43 մլն դրամ):

✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 81%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին կազմել է 83%, ինչը նկատելիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից,

✓ Խոշոր հարկատուների ցանկի առաջին հիսունյակում տեղ զբաղեցրած հարկատուների շուրջ 1/3-ի դեպքում նախորդ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ առկա է վճարած հարկերի ծավալի նվազում: Այս ցուցանիշով զգալի է ԱԿԲԱ բանկի վճարած հարկերի կրճատումը՝ շուրջ 3,9 մլրդ դրամով, «Գազպրոմ Արմենիա»-ն՝ -2,7 մլրդ դրամ, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ»-ը՝ -2,6 մլրդ դրամ, «Ֆիլիպ Մորրիս Արմենիա»ն՝ -1,8 մլրդ դրամ, «Յուքոմ»-ը՝ -1,5 մլրդ դրամ:

✓ Հիսունյակի մեջ ներառված հարկատուների 2/3-ը նախորդ տարվա համեմատ ավելացրել է վճարած հարկերի մեծությունը, ընդ որում՝ դրանց կեսի դեպքում աճը գերազանցում է 1 մլրդ դրամը: Նախորդ տարվա համեմատությամբ ամենամեծ ավելացում արձանագրած հարկատուների շարքում են՝ ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ՝ +14,6 մլրդ դրամ, ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ՝ +2,1 մլրդ դրամ, ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ՝ +1,5 մլրդ դրամ, ՅՈՒՆԻԲԱՆԿ՝ +1,5 մլրդ դրամ: